

Մոնա Վանյան

# ՄԱՐԴԸ ԵՎ ՄԱՐՏԸ

*(հրապատում պատմվածքների ժողովածու)*



Երևան

*Հեղինակային հրատարակություն*

2021

ՀՏԴ 821.19-32 Վանյան

ԳՄԴ 84(5Հ=51)-44

Վ 226

Վ 226 **Մարդը և մարտը** / Ս. Վանյան.- Եր.: Հեղ. հրատ., 2021.- 111 էջ+ ներդիր 2 էջ:

Երիտասարդ գրող, գրականագետ Սոնա Վանյանի «Մարդը և մարտը» իրապատում պատմվածքների ժողովածուն նվիրված է 2020 թվականի արցախյան պատերազմի մարտիրոս, հերոս հայորդիներին:

ՀՏԴ 821.19-32 Վանյան

ԳՄԴ 84(5Հ=51)-44

ISBN 978-9939-0-3548-2

© Վանյան Ս., 2021

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք-----	էջ 4
Հավերժ կարոտ-----	էջ 7
Վերադարձ-----	էջ 11
Կյանքախեղդ աշուն -----	էջ 15
Աշուն, սպասում ու սեր... -----	էջ 19
Հոգու և կյանքի լարերը -----	էջ 22
Հավատ ու հույս -----	էջ 25
Արիության մարտիկը -----	էջ 30
Մզմեի պարտեզը -----	էջ 33
Արենը՝ արևը -----	էջ 37
Իմ մեծ հավատ -----	էջ 41
Փրկությունն ապրելն է -----	էջ 44
Միրտը սահմանին -----	էջ 50
Ցեղասպանություն -----	էջ 55
Պատմության դասերը -----	էջ 60
Իմ կյանքն իմ պատերազմն է -----	էջ 67
Արտա՛ շս -----	էջ 71
Բոպեն կյանք էր -----	էջ 74
Երկիրը պատերազմի մեջ է -----	էջ 78
Մի՛ վախեցիր, ես՝ կամ -----	էջ 82
Նեղացել եմ Աստծուց -----	էջ 86
Կապո՛ւյտ, կապո՛ւյտ երազներ -----	էջ 89
Դարակերտի սերը -----	էջ 93
Օրագրից պատառիկներ -----	էջ 97
Մարդասիրության մեկ օր-----	էջ 100
Ախպերս ու ես-----	էջ 105
Հեղինակային մտորումներ-----	էջ 109

## Երկու խոսք

2020թ. սեպտեմբերի 27-ը Հայոց աշխարհում չլուսացավ: Արևի ճառագայթների փոխարեն Ստեփանակերտ հասանադրբեջանական հրթիռները:

Պատերազմ էր. աշխարհը միանգամից սուզվեց խավարում, որ լուսավորվի պատերազմի կրակներով:

Կրկին ու կրկին պատերազմ ու կրկին դարավոր թշնամու վիշապի նման ճանկերը երկարել էին դեպի հայր: Ժամանակը կարծես կանգ առավ, ու այն ինչի մասին այդքան կարդացել էինք գրքերում ու լսել ավագ սերնդից՝ տեսանք, շոշափեցինք ու զգացինք սեփական աչքերով: Ու հասկացանք, որ պատերազմը երբեք էլ չէր ավարտվել: Այն ո՛չ 1920 թ. ավարտվեց, ո՛չ էլ՝ 1994 թ.:

Հայ մարդու ձեռքերը, որ սովոր էին ստեղծելու, կրկին պատերազմի կոշտուկներով պատվեցին ու հայ երիտասարդները՝ թողած կյանք, սեր ու ընտանիք, մեկնեցին ռազմի դաշտ՝ պաշտպանելու իրենց սերը, ընտանիքը, հայրենիքը: Պատերազմը ծանր էր, ռազմական փորձագետները այն բնորոշեցին՝ «հինգերորդ սերնդի պատերազմ», իսկ ռազմաճակատից վերադարձած մի զինվոր պատմում էր, որ «երկինքը պատռվել էր ու անձրևից էլ ուժեղ կրակ էր թափվում», իսկ մեկ այլ կամավոր ասաց. «ես լսել էի, որ դժոխքը գետնի տակն է, բայց այն մեր գլխավերևում էր»:

Հայ երիտասարդը ելավ տասնապատիկ ուժի դեմ, այնպես ինչպես Ավարայրի ժամանակ, ինչպես Դավիթ

Բեկի օրոք, ինչպես Սարդարապատում, ինչպես Արցախյան առաջին պատերազմի օրերին: Ոչինչ չէր փոխվել: Կրկին թալանի անգուսպ տենչով վայրի թշնամին էր, ով հարձակվել էր քաղաքակրթության ու մարդու վրա:

Հայ ժողովուրդը անդադրում աշխատեց, պայքարեց ու մաքառման մեջ միայն ինքն իրեն էր հարց տալիս, որովհետև աշխարհը կարծես կուրացել էր ու խլացել, ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր լսում: Ցավին խուլ էր, տառապանքին՝ անտարբեր:

Խաղաղությունն ի վերջո եկավ 44 օրյա կատաղի պատերազմից հետո, բայց այն մեր հոգիներիս խաղաղություն չբերեց: Այն բերեց հարցեր, որոնց ոչ ոք ի գործու չէ պատասխանել, որովհետև ոչ ոք չի կարող հայ պատանուն ասել, թե ինչու իր ձեռքերը խլեցին ու ոչ էլ իր հորը սպասող փոքրիկին կարող ես բացատրել, թե ինչու իր հայրն այդպես էլ չվերադարձավ, ոչ այդ, ոչ էլ հաջորդ երեկո: Ոչ ոք չի կարող երիտասարդ աղջկան ասել, թե ինչու այդ հանդիպմանը իր սիրած տղան իրեն սովորականից ավելի երկար գրկեց...

Հազարավոր զինվորներ ու բազմաթիվ խաղաղ բնակիչներ զոհ գնացին, հարյուրավոր զինվորներ հաշմանդամ դարձան: Ոմանց մեջ չորացավ ապրելու կիրքը, ոմանք կորցրին հենց կյանքը: Ու այդ գնով ապրեցինք մենք:

Պատերազմն ավարտվեց, իսկ հարցերն անպատասխան են: Արդյո՞ք մենք պարտվեցինք: Դիվանագետները, գուցե, բայց ո՛չ հայ զինվորը: Հայ զինվորը երբևէ չի պարտվել: Իր հայրենիքի, ընտանիքի ու

տան պաշտպանության համար պայքարող մարդուն հաղթելն անհնար է: Զինվորը հաղթել է, և դրա ապացույցը մենք ենք, մենք ողջ ենք, ու դա միայն զինվորի շնորհիվ:

Գիրքն այդ հերոսների մասին է, ովքեր ընդամենը մի քանի ամիս առաջ դեռևս երեխաներ էին իրենց պատանեկան երազներով ու հույսերով, բայց ստիպված մեծացան, որ կարողանան իրենց ուսերին պահել այդ ծանր ու դառը մարտահրավերը:

Գրքում ընթերցողը կհանդիպի մեր իրական հերոսներին ու նրանց ընտանիքներին, նրանց կիսատ թողած երազանքներին ու անհավատալի հերոսություններին: Կլսի նրանց պատմությունները, որոնցից ամեն մեկը մի հերոսապատում է ու անմնացորդ նվիրումի օրինակ, որը ոգեշնչելու է հաջորդ սերունդներին ու մի օր մեր բոլոր տղաների հոգիները կխաղաղվեն՝ տեսնելով, որ իրենց հաջորդները հաղթական ավարտին են հասցրել այն, ինչի համար նրանք չինայեցին աշխարհում ամենաթանկը:

Փա՛ռք քեզ, հայ զինվո՛ր...

*Գրող, պատմարան՝ Արայիկ Մկրտումյան*

# Հավերժ կարոտ

*Նվիրվում է 2020 թ. արցախյան պատերազմի  
անմահ հերոս՝ Մխիթար Գալեյանին (Դուխավիկ Մխո)*

Եռաբլուրը ջահելազարդ թանգարան է բաց երկնքի տակ,  
ուր լռությունը աղաղակում է, սիրտը՝ ճաքում, ապրելը՝  
թվում հանցանք, իսկ հայացքդ սառած է միշտ՝ երկինք  
հառած, վրեժածով ու մեղավոր...

Եռաբլուրը հերոսների նոր տունն է, կիսատ սերերի  
ժամադրավայրը, սգավոր մայրերի հավերժական լացը ու...

Հեռվից դիտողին կթվար, թե արձաններն են  
կենդանացել, դուրս են եկել երթի, այն ինչ քայլում էին մի  
քանի սևազգեստ կանայք՝ նույնչափ քարացած սրտով...  
Բարձունքում լաց էր, կարոտ ու հուշեր, քաղաքում՝  
կերուխում, լույսեր...

Ամանոր էր, բայց հազարավոր ընտանիքներ այդպես էլ  
մնացին հին տարում. սիրելիները այնտեղ էին մնացել...

Տիկին Աստղիկն էլ իր բաժին ճամփան էր անցնում մինչև  
կիսաներ գերեզման... Հուշերը ձեռքին բռնած ծաղիկների  
պես թարմ էին և կարոտի պես ծանր ու շատ: «Լավ կծածկեմ  
որդուս, որ չմրսի հանկարծ». մտածել էր հերոսածին մայրը  
ու գնել սրահի բոլոր ծաղիկները: Դեղին վարդերը դեռ  
ճամփի կեսն էլ չհասած թոռումելու նշաններ ցույց տվեցին...

«Երկու տարին երկու օրվա պես կանցնի, կգամ, մա՛մ  
ջան, արն՛ս, կյա՛նքս, դու մենակ քեզ լավ նայի՛ր» հիշեց

որդու խոսքերը ու հասկացավ, որ ինքն էլ ժամանակին մի հասած վարդ էր՝ ժպտուն, արևավառ, բայց որդու մահը տապալեց իրեն: Փորձեց թաքցնել ներս հոսող արցունքները, հայացքը վեր պարզեց՝ աստղերը աչքով արին և միայն մի աստղ ցուլաց ավելի վառ: «Մխիթարս է, լսում է ինձ», մտածեց մայրը և այդ պահից էլ զգաց իր անունի ու ճակատագրի կապը:

Երկինքն ու Եռաբլուրը մրցում էին կարծես, վերևից անձրև էր, ներքևում՝ լաց, վերևում աստղերն էին լույս տալիս, ներքևում՝ լույս տղերքը, բայց դեռ հարց էր՝ երկնքի սիրտն էր ավելի մեծ ու սև, թե՞ մայրերի...

-Ինչո՞ւ դատարկեցիր տունս, բալա՛, ինչո՞ւ քանդեցիր տունս, բալա՛, բա դու չէիր ասում՝ տունը երեխեքով եմ լցնելու մա՛մ ջան, բա ու՞ր ես, տղե՛ս, ես որտե՞ղ փնտրեմ էդ սիրուն ու ծով հայացքդ, ես որտեղի՞ց լսեմ էն անուշ ծիծաղդ, ո՞նց կարոտս հագեցնեմ, ո՞նց ապրեմ առանց քեզ, բալա՛, իմ հույսերը էլ ում հետ կապեմ, իմ ուժը ումից ստանամ,-տիկին Աստղիկը ծնկի էր իջել ու համբուրում էր որդուն գրկած հողը, խնդրում, որ լավ նայի տղուն, տաքացնի մայրաբար, գուրգուրի քնքուշ...

Հայացքը երկինք չհառեց՝ նեղացել էր Աստծուց. ինչո՞ւ իր անմեղ, մաքուր ձագին էսքան շուտ իր մոտ էր կանչել, շատ էլ որ նման էր հրեշտակի՝ գանգրահեր, բացսիրտ, նվիրվող...

-Ախր հետդ պայման էի կապել՝ տղուս հետ բեր բարով-խերով, որ բակով մեկ խնջույք անեինք, գուռնադիող նվազեինք ու ես էլ ծնկի գայի առաջդ՝ գոհությունս



հայտնեի, ինչու ծնկի բերիք շիրիմի առաջ, ինչո՞ւ չխնայեցիր, ինչ էինք արել քեզ...

Մայրական սիրտը երվում էր ցավից, կորցրել էր ժամանակի զգացումը, մոռացել էր անգամ, որ ամուսինն ու աղջիկը սպասում են տանը, իսկ ինքը ուշանալու համար չի էլ տեղեկացրել...

Դանդաղ վեր կացավ, բայց հագուստը թափ չտվեց, աշխատեց հնարավորինս զգույշ քայլի, որ որդուն գրկած հողը ծնկների վրա տուն տանի: Դեռ չէր հեռացել գերեզմանից, երբ որդու շիրիմին մոտեցող ոտնաձայներն ու անձանոթ կերպարը ստիպեցին կանգ առնել. մոտեցողը ոսկեծամ աղջիկ էր՝ Մխիթարին հասակակից:

Գիշերային մուգ մառախուղը աղջկա կերպարը վերածել էր հրեշտակի, ասես հենց հրեշտակ էր երկնքից իջել: Տիկին Աստղիկին մի պահ թվաց, թե ուղղակի տեսիլք է, բայց աղջիկը խոսեց հանկարծ.

-Դուք երևի Մխի մայրն եք:

Կինը գլխով արեց, աղջիկը մոտեցավ նրան ու գրկի մեջ տաքացրեց արցունքներից սառած դեմքը:

-Իսկ դուք ո՞վ եք, -կամացուկ շշնջաց Աստղիկը:

-Ես նրա ընկերն եմ կամ ընկերուհին, սիրած աղջիկը կամ ուղղակի ծանոթ մեկը:

Տիկին Աստղիկը լսում էր նրան ակնապիշ ու առանց ընդհատելու, դեմքին արցունքաթաց ժպիտ էր հայտնվել, աղջիկը շարունակեց.

-Ես սիրեցի ձեր որդուն, բայց այդ մասին իրեն ասել չկարողացա, իսկ այսօր այստեղ եմ հասել, որ ասեմ նրան՝ երանի՛ ավելի շուտ ճանաչեի քեզ ու այսքա՛ն չուշանայի...